ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 02/01.31/1125-19 " 04 " 03 2019 թ.

«ԴԱՆՄԵՐԻ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00874873) տնօրեն
տկն Մ. Դանիելյանին
Հասցե՝ ք. Երևան, Ավան-Առինջ 1-ին միկրոշրջան, 2/2 շենք, բն.8
էլ. հասցե՝ suren.grig@gmail.com

ՀՀ մշակույթի նախարարության և «ԴԱՆՄԵՐԻ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 31-ին կնքված N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-2» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) համաձայն Ձեր կողմից պետք է իրականացվեին պայմանագրի 1.1-րդ կետով և թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով սահմանված՝ ՀՀ Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի 13-րդ դարի եկեղեցու ամրակայման, վերականգնման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք):

ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ պատվիրատու) և «ԴԱՆՄԵՐԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ կատարող) միջև 2018 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N 1 համաձայնագրով պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել էր և սահմանվել 2018 թվականի նոյեմբերի 19-ը:

Ձեր կողմից 2018 թվականի սեպտեմբերի 17-ի և 2018 թվականի նոյեմբերի 19-ի գրություններով պատվիրատուի ընդունմանը ներկայացված աշխատանքը և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով երկու անգամ՝ 2018 թվականի հոկտեմբերի 15-ին և նոյեմբերի 16-ին ներկայացված պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունները չեն ընդունվել ու մերժվել են պատվիրատուի կողմից՝ ներկայացված աշխատանքի թերի լինելու պատճառով: 2018 թվականի դեկտեմբերի 19-ի դրությամբ Ձեր ընկերության կողմից պատվիրատուին չեն ներկայացվել պայմանագրի թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածի պահանջներին համապատասխան կատարված (անհրաժեշտ շտկումներով) աշխատանքները:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3-րդ կետի պահաջները՝ ՀՀ մշակույթի նախարարությունը 2019 թվականի մարտի 1-ին միակողմանի լուծել է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ԴԱՆՄԵՐԻ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 11500 (տասնմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը որպես տուգանք՝ պայմանագրի 5.2-րդ կետի համաձայն (պայմանագրի 4.1 կետում նախատեսված պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսը) և 34500 (երեսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը որպես տույժ՝ պայմանագրի 5.3-րդ կետի համաձայն:

Recoverable Signature

X

Signed by: MURADYAN SAMVEL 1104630109

Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարողներ՝
Ս. Գևորգյան
Հեռ.՝ 011-58-58-51
Ն. Կարապետյան
Հեռ.՝ 011-58-51-78